

Արուեստական արևոյք և առանց ճիւղ վառող. — Պատերազմական զաշտի մը մէջ վառողին ծուխը ստոյգ նշան մ'է թշնամեաց, որով կը գիտնան և կը դիտեն հակառակ բանակին ունեցած զիրքը և անոնց զօրութիւնը: Գիտութեանց յառաջագիմելումն ստիպուեցան գտնել առանց ծուխի վառողը և այսօրս կը գործածեն:

Կը ջանան արդ. արուեստական ամպեր կազմել, որպէս զի պատերազմական զաշտի վրայ հակառակորդ բանակքն կարենան գործածել իրենց զէնքերը՝ ծածուկ 'ի թշնամեաց:

Շատ ջանացին ամէն կողմանէ գտնել միջոցներ գիշերային պատերազմ ընելու. չկարենալով յաջողիլ կը ճգնին արդ. ցորեկը գիշերուան փոխարկել: Կը յուսան յաջող ելք մ'ունենալ այս ձեռնարկէն, ցորեկ ատեն գիշերուան պէս ծածուկ պատերազմիլ ընդդէմ թշնամեաց, ունելով ի ձեռին ամենայն պատերազմական զիրութիւնքը:

Հռչակիքները պահելուս և նոր կերպ. — Գաղղիոյ մէջ Սաս նոր կերպ մի հնարեց հաւկթաց պահպանութեան: Պէտք է ընկղմել զանոնք հինգ վեց վայրկեան կտաւատի իւղի մէջ, և թողուլ 24 ժամ՝ բացօթեայ որ չորնան, ապա զետեղել զանոնք փայտի սղոցութի կամ տաշեղի մէջ: Սաս իւրաքանչիւր ամիս կըսելով այս հաւկթաները, տեսաւ որ տարուէ մը վերջ ամենեին կըսոյ տարբերութիւն չկար: Եփելով քիչ մը կտաւատի իւղի համն ունէին, սակայն տնտեսական միւս գործածութեանց լաւ կը ծառայէին:

ԿԵՆԴՈՆԵՑՑ ՈՄԱՆՑ ՏԱՐԻՔՆ

Իւրաքանչիւր կենդանեաց տեսակը ունին իրենց յատուկ տարիք կամ ժամանակ մը, յորում կը սպառի սովորաբար անոնց կենաց շրջանն. և հահ կը դնեմք աստ ցուցակ մը աւելի ընտանեգոյն և ծանօթ կենդանեաց, թէ որչափ կ'ապրին սովորաբար:

Կէտն կամ պալէնան կ'ապրի զրեթէ 1000 տարի. փիղն՝ 150-200 տարի. կոկորդիլոսն կ'ապրի 100 տարի. նոյնպէս անզոն, արծիւն և ազուան կ'ապրին սովորաբար 100 տարի. առիւծ՝ 60 տարի. ոնգեղջիւր և ուղան՝ 50-60 տարի. թուխակն՝ 50. արտուտն՝ 40. ցուլն՝ 30 տարի. եղնիկն և ձին 25-30 տարի. շուներ՝ 23-28. սիրամարգ՝ 28. օձաձուկը՝ 25 տարի. խոզն և արջ՝ 20 տարի. նոյնպէս գայլը, կովը և պաղաղը կ'ապրին 20 տարի. պլպուլն՝ 16-20. աղուէս և կատուն՝ 18. դեղձանիկն՝ 10-20 տարի. ծիտն 10-15 տարի. ոչխարն՝ 12. մարախը, այծն և հաւն՝ 10. նապաստակն՝ 7-10 տարի. սկիւռն՝ 6. իշամեղուն՝ 4 տարի:

ԳՆԱՐ